

ՀԱՅ ՔՆԻՐԱԿԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ն. ՄԻՒՐԱԳՅԱՆ

Լեզվաբանության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում տարբեր լեզուներում զանազան մասնագիտությունների գծով տերմինների ստեղծման ու համալրման եղանակները:

Տերմինների ստեղծման հիմնական աղբյուրը հանդիսանում է տվյալ լեզվի ու նրա բարբառների բառային կազմը, որի միջոցով արգեն ծանոթ նյութի հիման վրա ստեղծվում և համակարգվում են նորանոր հասկանալի, հաշոդ ու դիպուկ տերմիններ:

Բառային հիմնական ֆունդի և բառային կազմի բառերը որպես տերմին օգտագործվում են հաճախ նույնությամբ, առանց բառակազմական փոփոխության: Սովորական այդ բառերը, սակայն, տերմինի նշանակություն են ձեռք բերում իմաստի մասնագիտացման, բառիմաստի փոփոխության՝ նեղացման կամ լայնացման, կամ ոճական երանգավորման շնորհիվ:

Տերմինների ստեղծման կարևոր աղբյուր է հանդիսանում այլ լեզուներից պատրաստի տերմինների փոխառությունը, որը հետևանք է պատմական որոշակի պայմանների, ժողովուրդների միջև գիտական ու մշակութային փոխադարձ հարաբերությունների և այլն:

Անտիկ շրջանում հին հունարենով և լատիներենով ստեղծվել են գիտական, տեխնիկական և քաղաքական բազմաթիվ տերմիններ, որոնք աստիճանաբար լայն տարածում գտնելով տարբեր լեզուներում, միջազգային ճանաչում են ստացել: Այժմ հին հունարենի և լատիներենի արմատները, ածանցները և բառակազմական միջոցները հնարավորություն են տալիս շատ լեզուների յուրացնելու և պատշաճեցնելու դրանք իրենց լեզվի ներքին օրենքներին, քերականությանն ու նշյունաբանությանը և կազմելու անհամար թվով նոր տերմիններ:

Տերմինների ստեղծման մյուս աղբյուրը հանդիսանում է այլ լեզվի տերմինի պատճենումը: Պատճենումներն իրենց բնույթով լինում են՝ ա) իմաստային, այսինքն՝ թարգմանություններ, որոնք արտահայտում են վերցվող տերմինի միայն իմաստը և բ) կառուցվածքային-իմաստային, այսինքն՝ բառացի թարգմանություններ, որոնք պահպանում են տվյալ տերմինի ոչ միայն իմաստը, այլև կազմությունը, երբեմն նույնիսկ ձևը:

Այս ելակետներից մոտենալով հարցին, կարևոր ու հետաքրքիր է քննել հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման եղանակներն ու կազմությունը:

Դասական հայերենից մեզ ազանդվել են միայն սակավաթիվ քերականական հասկացություններ, որոնցից մի քանիսը հետագայում կայունացել են որպես տերմիններ: Ժամանակակից հայերենի քերականական տերմինների մեծամասնությունը կերտվել է այսպես կոչված «հունարան դպրոցի» ներկայացուցիչների (հիմնականում՝ Իլիոնիսիոս Թրակացու քերականության հայ թարգմանչի՝) կողմից: Իլիոնիսիոսի քերականության հայերեն թարգմանությամբ «հունարան դպրոցի» քերականներն ու մեկնիչները դրել են ոչ միայն հայերենի ուսումնասիրության, այլև հայ քերականական տերմինաբանության հիմքը:

«Հունարան դպրոցի» ներկայացուցիչների գլխավոր ծառայություններից մեկը հանդիսանում է այն, որ նրանք առաջին հերթին հարստացրել են հայերենի բառակազմական հնարավորությունները, կերտելով բազմաթիվ նախածանցներ, որոնք մեծապես նշտացրել են քերականական տերմինների ստեղծումը: Թրակացու քերականության հայ թարգմանիչը, ղեկավարվելով որոշակի սկզբունքով, խուսափել է փոխառություններից, քերականական տերմինների կերտման համար որպես աղբյուր օգտագործելով բացառապես հայերենի բառապաշարն ու լեզվական հնարավորությունները: Հայերենի քերականական տերմիններն ստեղծելիս թարգմանիչը թեև օգտագործել է հայերենի բառապաշարն ու լեզվական հնարավորությունները, սակայն միաժամանակ պատճենել է հունարեն տերմինի իմաստը, շատ դեպքերում նաև կառուցվածքը:

Նկատի ունենալով «հունարան դպրոցի» ստեղծած քերականական տերմինների աղբյուրն ու կերտման եղանակը, այդ տերմինները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Տերմիններ, որոնք զալիս են դասական հայերենից. օրինակ՝ գիր, ձայնաուր, վանկ, բազմաուր>բազմաուրական, փոխաճակ-աճուռն և այլն:

2. Տերմիններ, որոնք դասական հայերենում եղել են սովորական կիրառություն ունեցող բառեր: Թարգմանիչը այդ բառերին, հունարենի համարանությունով, հաղորդել է լրացուցիչ մասնափտական իմաստ և գործածել որպես բերականական տերմիններ: Օրինակ.

Հնչյունաբանական տերմիններ՝ տարր-տառ, երկայն, սուղ, բարակ, նուրբ, լերկ, միջակ, թալ, նայ, աղաւտ և այլն:

Ձևաբանական-բառագիտական-բառակազմական տերմիններ՝ բառ, բան, անուն, սեր-սեռ, պարզ, բարդ, թիւ, հոլով, յասուկ, բայ, գէմբ. անորոշ և այլն:

Կետադրական-սոցիոլոգիական տերմիններ՝ կէտ, միջակ, շեշտ, բութ, երկար, սոսկ և այլն:

3. Տերմիններ, որոնք թարգմանիչն է կերտել հունարեն համարժեք տերմինների իմաստի համապատասխան, օգտագործելով դասական հայերենի բառերը, արմատներն ու վերջածանցները: Օրինակ.

Հնչյունաբանական տերմիններ՝ ձայնորդ, քմակից, կրկնակ:

Ձևաբանական-բառագիտական-բառակազմական տերմիններ՝ ածանց, յոդանական, բայածական, պատուիրական, խնդրական, գործաւորական, սաստկութեան, հառապական, անջատական, տարակուսական, թարմատար և այլն:

Լեռնաբանական տերմիններ՝ ոլորակ, պարոյկ:

4. Տերմիններ, որոնք իմաստային-կառուցվածքային պատճենումներ են իրենց հունարեն համարժեքների: Այս տերմինները կազմված են հունարենի անալոգիայով կերտված նախածանցներից, դասական հայերենի արմատներից ու վերջածանցներից: Օրինակ.

Բնօրինակ բերականական տերմիններ՝ բերականութիւն, վերծանութիւն, առձեռն բացատրութիւն, ստուգաբանութեան գիտ, դատումն քննադատ:

Հնչյունաբանական տերմիններ՝ երկամանակ, առաջադիւր, վաղադասական, ստորադաս, երկբարբառ, երկձայն, բաղաձայն, կիսաձայն և այլն:

Ձևաբանական-բառագիտական-բառակազմական տերմիններ՝ մասն բանի, արական, իգական, շէգոր, ստացական, բաղդատական, գերադրական, հոմանուն, մակդիր, թուական, դասական, հարցական, շերտերական, նմանական, ցուցական, եզական, երկական, հոլովական, անհոլով, ուղղական, անուանական, հայրենի, սեռական, տրական, առաքական, հայցական, փառաական, հռչական, խոնարհութիւն, խոնարհումն, սահմանական, աներևոյթ, հրամայական, ըզձական, ստորադասական, ներգործական, կրաւորական, ներկայ, յարաձգական, յարակայական, գերակատար, լծորդ, լծորդութիւն, բնդունելութիւն, նախադասական, դերանուն, նախադրութիւն, ստորադաս, մակբայ, միջակութեան, բանակութեան, թուոյ յայտական, դրական, շաղկապ և այլն:

Կետադրական-առոգանական տերմիններ՝ կէտ աւարտեալ, ստորակէտ, առողանութիւն, ապա-

թարց, ենթամայն, ստորատ և այլն:

Ինչպես նկատելի է, «հունարեն դպրոցի» կերտած բերականական տերմինների համար օգտագործվել են բառապաշարի հարստացման թե՛ ներքին միջոցները՝ հայերենի բառային կազմն ու բառակազմական հնարավորությունները և թե՛ արտաքին միջոցները՝ պատճենելով հունարեն տերմինների իմաստն ու կազմությունը:

Թարգմանչի կերտած հաջող ու դիպուկ տերմինների կողքին կան նաև շատ տերմիններ, որոնք հունարեն նախօրինակի բառացի թարգմանությունը կամ անհաջող պատճենումն են: Սակայն «հունարեն դպրոցի» կերտած հայերենի բերականական տերմինաբանությունը գնահատելու, նրա արժանիքներն ու թերությունները վերահանելու համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հանգամանքներ: Նախ՝ պետք է նկատի ունենալ ժամանակի դիտական մակարդակը, ի՞նչպիսիք էին հայ մեկնիչների գիտելիքների ու ծանոթությունների շրջանակը, նրանց աշխարհայացքը, որը առավել կամ նվազ չափով կրել է միջնադարյան աշխարհայեցողության կնիքը: Երկրորդ՝ թրակացու բերականության հայերեն թարգմանությունը հիմնականում թարգմանական բնույթի աշխատանք է, սակայն թարգմանիչը ինչպես բնադրի թարգմանության, այնպես էլ բերականական տերմինաբանության կերտման առթիվ հաճախ ցուցաբերել է զգալի ինքնուրույնություն: Այս հանգամանքը իրավունք է տալիս թարգմանչի աշխատանքը դնալ առելու ոչ միայն որպես թարգմանություն, այլև հայերենի բերականական հարցերի՝ իր ժամանակի լուրջագույն սխալմամբ շարադրանքի ու բերականական տերմինաբանության կերտման առաջին փորձը: Իրեն այդպիսին, այն ունի լուրջ արժանիքներ, բնականաբար՝ նաև թերություններ: Երրորդ՝ թարգմանիչը, ընդհանրապես, չանցել է հարադաս կերպով վերաբնութագրել ոչ միայն բնագիրը, այլև բերականական տերմինները: Սակայն շատ դեպքերում դժվարանալով հունարենի բերականական այս կամ այն հասկացության ճշգրիտ համարժեքը գտնել հայերենում, նա, ինչպես ասվեց, հարազատուրեն

պատճենել է հունարեն տերմինը՝ *Պետք է նկատի ունենալ, որ քերականությունը, իբրև խոսքի կառուցվածքի իրողություններն ուսումնասիրող գիտություն, միջլեզվային գիտություն է, և եթե մի լեզվի քերականությունը զգալի փոփոխությունների ենթարկվի նույնիսկ միայն տերմինների սահմաններում, դրանով մեծ ճեղքվածք կստեղծվի տվյալ լեզվից այլ լեզուների ուսումնասիրությանը անցնելու գործում»* 1:

Թարգմանչի կերտած տերմինաբանության որոշ արժանիքներ ու թերություններ զալիս են Թրակացուցի՝ Դիոնիսիոսի «Քերականական արվեստը» ներկայացնում է ոչ միայն Ալեքսանդրյան զպրոցի քերականական նվաճումների, այլև բոլոր նախորդների քերականական գիտողությունների ամփոփումը: Այս աշխատության մեջ նյութի խմբավորումը, խոսքի մասերի տարբերակումը և զրանցից յուրաքանչյուրի առանձին քննությունը հնարավորություն են տվել Թրակացուն՝ համակարգելու քերականական ամբողջ տերմինաբանությունը: Նույնությամբ պահպանելով բնագրի դասավորությունն ու տերմինաբանությունը, Թրակացու թարգմանիչը իր հերթին հայերենում կերտել է համակարգված ու միասնական տերմինաբանություն: Քերականական յուրաքանչյուր տերմինը կերտելիս նա այն գիտել է ոչ թե իբրև մեկուսացած, առանձին միավոր, այլ որպես մի անդամը քերականական տերմինաբանության ամբողջ համակարգի, որտեղ տերմինները համախմբված ու դասդասված են ըստ իմաստային, բառակազմական ու ձևաբանական որոշակի օրինաչափությունների ընդհանրության: Օրինակ, «անվան» քերականական հատկանիշներ են համարվում սեռը, տեսակը, ձևը, թիվը, հոլովը: Սերը ստորաբաժանվում է արական, իգական, շեղոք, հասարակ տեսակների: Թիվը՝ եղական, երկական, հոգնական տեսակների: Հոլովը՝ ուղղական, սեռական, տրական, առաքական, հայցական, հոշական տեսակների և այլն:

Թարգմանչի կերտած տերմիններն ունեն նաև մի շարք այլ արժանիքներ, որոնք վկայում են թարգմանչի լեզվական հմտության մասին: Նա լավ տիրապետում է թե՛ հունարենին և թե՛ հայերենին. այդ պատճառով էլ նրան հաջողվել է կազմել ընդհանուր առմամբ հասկանալի, դուրբմբոսների, հաճախ դիպուկ, մեկնաբանելի և մեծ մասամբ՝ մեկ բառով արտահայտված, կարճ տերմիններ: Սրանք առավելություններ են, որոնք կալում են ամեն մի տերմինաբանության, այդ թվում նաև քերականական տերմինաբանության գլխավոր արժանիքները:

Վերահիշյալ տերմիններից շատերը, հավանաբար, միանգամից հասկանալի չեն եղել կամ հեշտությամբ չեն յուրացվել, սակայն հաճախակի ընթերցման ու կիրառության շնորհիվ դարձել են ոչ միայն հասկանալի, այլև ժամանակի ընթացքում՝ հարստացած:

Նշված արժանիքների կողքին թարգմանչի կերտած տերմինաբանությունն ունի նաև որոշ թերություններ. օրինակ՝ թարգմանիչը, Դիոնիսիոսի հետևողությամբ, գործ է ածել մի շարք տերմիններ, որոնք չունեն իրենց կայունացած, որոշակի իմաստը, մինչդեռ տերմինի գլխավոր հատկանիշներից մեկը հանդիսանում է իմաստի որոշակիությունը, պարզությունը, իմաստային սահմանների ճշգրտությունը: Այդպիսի տերմիններ են, օրինակ՝ գիր-տառ, բառ-բան-մասն բանի, առուն (գոյական, ածական, թվական և որոշ դերանուններ), տեսակ (բառի կազմությունը, անվան իմաստային առումները), խոնարհումն-խոնարհութիւն-ներխոնարհութիւն, կէտ (կետադրություն, կետադրության նշան, վերջակետ), արողանութիւն (ձայնի համապատասխան ելեէջով արտասանությունը, առողանության նշանները) և այլն: Այս թերությունը դժվարացնում է տերմինների հասկանալիությունն ու կիրառությունը:

Հաճախ նոր ստեղծվող տերմինների գլխավոր թերություններն են լինում նրանց բազմիմաստությունն ու հոմանշությունը: Թարգմանչի կերտած տերմինները գերծ չեն այդ թերություններից:

Հայերենի քերականական տերմինների բազմիմաստությունն առաջացել է հետևյալ պատճառներով.

1. Մի շարք տերմինների իմաստը թե՛ հունարենում և թե՛ հայերենում դեռևս որոշակի եկրպով տարբերակված, կոնկրետացած չի եղել, որպեսզի հնարավոր լիներ ընտրել հասկացության հիմնական հատկանիշը և այն դնել տերմինի կազմության հիմքում: Այդ պատճառով նույն տերմինն արտահայտել է մեկից ավելի իմաստներ. օրինակ՝ «նախադրութիւն» նշանակել է՝ 1. նախդիր, 2. նախադրություն, 3. նախածանց:

2. Նույն տերմինը պուրապուր կերպով գործածվել է քերականության տարբեր բաժիններում կամ հասկացությունների նմանակությամբ՝ տարբեր խոսքի մասերի համար: Նկատելի է, որ ինչպես հունարենում, այնպես էլ հայերենում թե՛ հնչյունաբանական և թե՛ ձևաբանական տերմինները ձևաբանական տեսակետից մեծ մասամբ գոյականացված ածականներ են, իսկ շա-

1 Գ. Սևակ, խոսքի մասերի ուսմունքը, Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. XI, Երևան, 1935, էջ 190:

բաժնուսական տեսակետից՝ որոշիչներ, որոնց որոշյալները հաճախ բաց են թողնված՝ տերմինը ավելի կարճ, մեկ բառով արտահայտելու համար. օրինակ՝ «սուղ» տերմինը որոշիչ է և՛ ձայնավորին, և՛ վանկին, և՛ առողջանություն նշանին, կամ «երկամանակը»՝ և՛ ձայնավորին, և՛ տաղաչափական ոտքին: Նման տերմինների իմաստը ամբողջական ու հասկանալի է դառնում միայն որոշյալի հետ հարադիր գործածության դեպքում և կամ կոնտեքստում, մինչդեռ քերականական տերմինը պետք է ունենա իր որոշակի, կայունացած իմաստը՝ անկախ կոնտեքստից, Այսպիսով առաջանում են բազմիմաստ տերմիններ կամ տերմինների բաղադրիչներ, որոնք իրենց հիմնական իմաստը պահպանելով հանդերձ, տարբեր խոսքի մասերի կամ քերականական հասկացությունների հետ արտահայտում են նոր իմաստ: Այսպես, բազմիմաստ տերմիններ կամ տերմինների բաղադրիչներ են՝ ստացական — 1. «անվան» ածանցական տեսակ (ստացական իմաստ արտահայտող վերջածանց). 2. դերանվան տեսակ. 3. սեռական հոլով, Բաղդադական — 1. «անվան» ածանցական տեսակ (ածականների համեմատական աստիճանը կազմող վերջածանց). 2. համեմատության աստիճան ցույց տվող մակբայ, Դասական — 1. թվականի տեսակ. 2. մակբայի տեսակ: Հարցական — 1. դերանվան տեսակ. 2. մակբայի տեսակ: Յուցական — 1. դերանվան տեսակ. 2. առաջական՝ գործիական հոլով: Պարզ — 1. արմատական բառ. 2. ուղղական հոլով: Անորիշ — 1. հարցական դերանուն. 2. անցյալ կատարյալ և այլն:

Նկատելի է, որ քերականական տերմինների բազմիմաստությունը, որը գործնական տեսակետից մեծապես դժվարացնում է տերմինների ճիշտ ընկալումն ու կիրառությունը, Թրակացուց է անցել հայերենին և բավականին մեծ տեղ է գրավում:

Քերականական տերմինների հոմանշությունը հայերենում ավելի լայն տեղ է գրավում, քան բազմիմաստությունը: Հայերենի քերականական տերմինների հոմանշությունն առաջացել է հետևյալ պատճառներով.

1. Որոշ հոմանիշներ հունարենից են անցել հայերենին: Դրանք հունարենում, հավանաբար, առաջացել են տարբեր ժամանակներում կամ կիրառվել են քերականական տարբեր դպրոցների կողմից և կամ հոմանիշներից մեկը մյուսի բացատրությունն է հանդիսացել. օրինակ՝ «սուղ» հոլովը հունարենում ունեցել է երեք անվանում՝ *σφ'ի*, *ὀσφ'α* և *εὐφ'ε*: Համապատասխանաբար թարգմանիչը կերտել է ուղղական, անուանական և պարզ հոմանիշները: Անուանական համար *γεν'α*, *α'α*, *πα'α* տերմիններին համապատասխան կերտվել են սեռական, ստացական, հայերենի հոմանիշները և այլն:

2. Ավելի մեծ թիվ են կազմում այն հոմանիշները, որոնք հատուկ են միայն հայերենին: Թարգմանիչը միևնույն հասկացությունն արտահայտելու համար հաճախ կազմել է մի քանի հոմանիշներ, որոնք վկայում են, մի կողմից՝ տերմինարանության դեռևս անկայուն վիճակի, մյուս կողմից՝ հունարան հայերենի նոր կազմավորման մասին: Առաջին դեպքում թարգմանիչը գործ է ածել հոմանիշ հասկացություններ և կամ, հայերենի բառապաշարն օգտագործելով, կազմել է հոմանիշ տերմիններ: Երկրորդ դեպքում գրաբարյան ձևին զուգահեռ նա կերտել է հունարան կազմությամբ հոմանիշներ և կամ, հունարեն նույն տերմինի համապատասխան, պատճենել է մի քանի հոմանիշներ՝ օգտագործելով հոմանիշ նախածանցներ: Այսպես, հուն. *εὐφ'ε* տերմինի համապատասխան թարգմանիչը կազմել է երկրաբան և երկծայն, *α'α*-ի համապատասխան՝ հայցական, խնդրական, փաստական հոմանիշները: Գրաբարյան բառը ձևի կողքին նա պատճենել է նաև ջոկադիւ տերմինը, բազմաութական ձևի կողքին՝ յոգնական, վանգ-ի կողքին՝ շաղաշառ, փաղառութիւն, շախավանգ հոմանիշները, Հուն. *αὐτ'α*-ի համապատասխան նա պատճենել է անորոշ, անսահմանական, *αὐτ'α*-ի համապատասխան՝ ներգործական, գործառական, *αὐτ'α*-ի համապատասխան՝ զերականաբար, առաւելականաբար, վաղակատար հոմանիշները և այլն:

3. Հոմանիշներ էլ կան, որոնք ոչ թե տարբեր արմատներից կամ ածանցներից են կազմված, այլ նույն տերմինի տարբերակները, մասնակի ձևափոխություններն են հանդիսանում: Այդ ձևերը դրժածվել են զուգահեռաբար, մինչև որ դրանցից մեկը հաղթանակել ու կայունացել է և կամ երկուսն էլ փոխարինվել են նոր տերմինով: Օրինակ՝ հուն. *γεν'α*-ը թարգմանիչը պատճենել է սեռ և սեռ, *πα'α*-ը՝ ածանց և ածանցական, *ὀσφ'α*-ը՝ երկական և երկութական, *εὐφ'ε*-ը՝ մակդիր և մակադրական, *αὐτ'α*-ն՝ դերանուն և դերանունություն և այլն:

Այսպիսով, «հունարան դպրոցի» սահմանափակ քերականական մի շարք տերմինների բազմիմաստությունն ու հոմանշությունը վկայում են այն մասին, որ այդ տերմիններն իրենց ժամանակին սրուշակի կերպով տարբերակված իմաստ չեն ունեցել: Քերականական տերմինարանությունը դեռևս կայունացած չի եղել, այլ գտնվել է իր կազմավորման պրոցեսում:

Հայերենի քերականական տերմիններն ըստ կազմության կարելի է բաժանել հետևյալ խմբերի. 1. պարզ կամ արմատական, 2. ածանցավոր, 3. բարդ, 4. բարդ-ածանցավոր, 5. բառակապակցությամբ արտահայտված տերմիններ:

Պարզ կամ առմատական տերմինները, քերականաբար, նոր շեն կերտվել: Դրանք եղել են՝ դասական հայերենում սովորական գործածություն ունեցող բառեր, որոնք թարգմանչի կողմից իմաստի մասնագիտացման ենթարկվելով կայունացել են որպես քերականական հասկացություններ: Այս կարգի տերմիններն իրենց պարզ կազմության շնորհիվ հասկանալի են և հեշտությամբ յուրացվում են: Կիրառության տեսակետից նույնպես կարճ, դիպուկ բառեր են և մեծ առավելություն են ներկայացնում տերմինացման համար: Օրինակ՝ անուն, բայ, բան, բառ, բարդ, բութ, դիր, դէմք, թիւ, կէտ, յաւղ, նայ, շեշտ, պարզ, սեռ, վանգ, տառ և այլն:

Ինչպես լեզվի բառապաշարի հարստացման, այնպես էլ հայերենի քերականական տերմինաբանության կերտման ամենակենսունակ աղբյուրը հանդիսացել են բառակազմական ածանցները, որոշ չափով նաև՝ բառահարաբերական ձևայինները:

Բառակազմական ածանցներն ավելանալով հիմնական ձևայիններին, ոչ միայն կոնկրետացնում են նրանց ընդհանուր գաղափարը, այլև բառի հիմնական նշանակությանը հաղորդում են այնպիսի նոր իմաստ, որը այնպես հնարավոր է արտահայտել միայն շրջաբանությամբ կամ նկարագրական եղանակով. իսկ շրջաբանությունը անհարկ է տերմինաբանությանը, որը գործունի առավելապես գոյականների, վերացական հասկացությունների հետ:

Ածանցումը մեծ առավելություն է ներկայացնում տերմինաբանության համար նաև այն տեսակետից, որ նա հնարավորություն է տալիս տերմինաբանությունը համակարգելու ոչ միայն իմաստային, այլև բառակազմական ու ձևաբանական տեսակետից:

Հայերենի ածանցավոր քերականական տերմիններն ըստ կազմության խմբավորվում են հետևյալ ձևով. 1. նախածանցավոր, 2. վերջածանցավոր, 3. բաղադրյալ (թե՛ նախածանցավոր և թե՛ վերջածանցավոր) տերմիններ:

Ածանցման նշված երեք ձևերով կազմված քերականական տերմինների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ածանցումն ընդհանրապես բառակազմական ամենակենսունակ միջոցն է հանդիսացել և չափազանց կարևոր դեր է խաղացել հայերենի քերականական տերմինաբանության կերտման գործում:

Հայերենի բառակազմական մյուս կարևոր միջոցը բառաբաղությունն է, որը թեև ոչ ածանցման կենսունակությամբ, այնուամենայնիվ, նույնպես ռազմագործվել է հայերենի քերականական տերմինների ստեղծման գործում: Նկատելի է, որ հայերենի քերականական տերմինների կերտմանը հայերենի բարդության տեսակներից օգտագործվել են միայն իսկական և ածանցավոր բարդությունները, որոնք տերմինի տեսական պահանջները բավարարելու տեսակետից առավել նպատակահարմար են:

Քերականական որոշ տերմիններ էլ կազմված են բառակապակցությամբ:

Ուշագրավ է, որ քերականական տերմինները, տրամաբանորեն, մեծ մասամբ արտահայտում են սեռի կամ տեսակի իմաստ և միմյանց նկատմամբ գտնվում են համաստորադասական հարաբերության մեջ: Այսպես, օրինակ, հնչյունաբանական տերմինների համար ընդհանուր սեռը հանդիսանում է հնչյունը, որի տեսակներն են ձայնավորներն ու բաղաձայնները: Վերջիններս իրենց հերթին ստորաբաժանվում են տեսակների: Քերականորեն որոշչային իմաստ արտահայտող այս տերմինները հասկանալի ու ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է կիրառել համապատասխան որոշչային հետ, ինչպես՝ երկայն ձայնավոր, սուղ ձայնավոր, նուրբ բաղաձայն, թավ բաղաձայն և այլն: Այլ խոսքով, հնչյունաբանական տերմինների մեծ մասը կազմվում է որոշչի և որոշչայի բառակապակցությամբ:

Նույն երևույթը նկատելի է նաև ձևաբանական տերմինների մեջ: Յուրաքանչյուր քերականական կարգի տեսակային տարբերությունները կամ խոսքի մասերի իմաստային տեսակավորումներն արտահայտելու համար հարկավոր է նշել նրանց սեռը, օրինակ՝ եղակի թիվ, հոգնակի թիվ, արական սեռ, իգական սեռ, ուղղական հոլով, սեռական հոլով, «քանակութեան» մակբայ, «թույլ յայտական» մակբայ, անջատական շաղկապ, տարակուսական շաղկապ և այլն: Լեռնաբար, քերականական տերմինների իշխող մեծամասնությունը բաղկացած է տարբերակված հասկանիչ արտահայտող որոշիչներից, որոնց իմաստը ամբողջանում ու կոնկրետանում է միայն որոշչայի հետ հարադիր գործածության ղեկավարմամբ:

Նկատելի է սակայն, որ թե՛ Գիտեսիոսը և թե՛ թարգմանիչը հետևողականորեն խուսափել են բառակապակցությամբ արտահայտվող որոշչի և որոշչայի հարադիր գործածությունից: Այդ պատճառով նրանք, նյութը հերթականորեն համակարգելով ըստ սեռի և տեսակի, ընդհանուրից

ղեկի մասնավորը, մեծ չափով օգտագործել են ձևաբանական միջոցները, որոնք հնարավորություն են տվել ածականով արտահայտված որոշիչը գոյականացնելու և նրա մեջ համատեղելու և և որոշյալի իմաստը: Բառակապակցությամբ արտահայտված քերականական տերմինները Դիոնիսիոսի և Թարգմանչի կողմից գործածվել են միայն անհրաժեշտության դեպքում:

Քերականական տերմինաբանությունը գործ ունի վերացական հասկացությունների և նրանց տարբերակված հատկանիշների հետ: Հետևաբար, քերականական տերմինները կազմված են այդ հասկացություններն արտահայտող խոսքի մասերից, գերազանցապես զոյականներից ու ուծականներից: Նկատելի է սակայն, որ այս երկու խոսքի մասերն էլ նույն չափով չեն մասնակցել տերմինների կերտմանը: Հստ կաշմությամբ ածականներն անհամեմատորեն գերակշռում են: Երինակ՝ հնչյունաբանական բոլոր տերմինները, բացի «տառ» և «գիր» տերմիններից, ածականներ են: Ձևաբանական տերմինների մուծավորապես երկու երրորդը նույնպես ածականներ են, եթե հաշվի չառնենք յուրաքանչյուր դեպքում որոշչի և որոշյալի հարադիր գործածությունը, որը իրենից ներկայացնում է ածականի և գոյականի հարադրություն: Սակայն ածականները տերմինի դերով կարող են հանդես գալ միայն փոխանունության դեպքում: Այդ պատճառով Դիոնիսիոսը և նրա հետևորդները Թարգմանչի, նկատի առնելով տերմինի տեսական պահանջները, ածականով արտահայտված բոլոր տերմինները գործ են ածել զոյականական առումով, դիմելով ձևաբանական միջոցների՝ բառահարաբերական ձևայինների օգնությանը, ըստ որում, փոխանուն ածականներն ընդունել են զեղչված գոյականների կողմը: լիլը և հոլովը:

Փոխանունությամբ հանդես եկող բոլոր տերմինները ոչ փոխանունաբար գործածվելիս արտահայտվում են բառակապակցությամբ: Բառակապակցության բաղադրիչները ձևաբանական տեսակետից կազմում են ածականի + գոյականի հարադրություն: օրինակ՝ կիսաձայն բաղաձայն, Թա բաղաձայն, արական սեռ, իգական սեռ, Թուական անուն, ուղղական հոլով, սեռական հոլով, սահմանական եղանակ, հրամայական եղանակ, հերքորական սեռ, կրավորական սեռ, ներկայ ամանակ, անցեալ ամանակ, անջատական շաղկապ և այլն:

Բառակապակցություններ էլ կան, որոնց բաղադրիչները ձևաբանական տեսակետից կազմում են զոյականի + գոյականի հարադրություն: օրինակ՝ «ստուգաբանություն», «մասունք բանի», «միջակութեան մակբայ», «քանակութեան մակբայ» և այլն:

Այսպիսով, հայերենի քերականական տերմինների ձևաբանական առանձնահատկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ քերականական տերմինները, ըստ խոսքի մասերի՝ գոյականների կամ գոյականական առումով հանդես եկող փոխանուն ածականներ են, որոնք ունեն առանձին կամ բառակապակցությամբ արտահայտված գործածություն:

Հետաքրքիր է անդրադառնալ բառակապակցությամբ արտահայտված քերականական տերմինների բաղադրիչ տարրերի միջև եղած շարահյուսական հարաբերություններին: Ընդհանուր առմամբ բառակապակցությամբ արտահայտված հնչյունաբանական ու ձևաբանական տերմինների բաղադրիչները միմյանց հետ կապակցված են որոշչի և որոշյալի հարաբերությամբ: օրինակ՝ «ուղ վանկ», «առաջադիր ձայնավոր», Թավ բաղաձայն, արական սեռ, եզակի Թիվ, ուղղական հոլով, տարակուսական շաղկապ և այլն:

Քերականական որոշ բառակապակցությունների բաղադրիչներ արտահայտում են հատկացուցչի և հատկացյալի հարաբերություն: օրինակ՝ «ստուգաբանություն», «համեմատություն», «տեղեկություն», «մասունք բանի», «ծողովոյ մակբայ», «քանակութեան մակբայ», «ուրացություն մակբայ» և այլն: Մակբայների իմաստային որոշ տեսակներ, օրինակ՝ «միջակութեան», «ճշգրտութեան», «սաստկութեան»⁴ «հաստատութեան» և այլն, որոշիչ-հատկացուցիչներ են: որոնք Թեև -ուրիմ վերջածանցով կազմված վերացական գոյականներ են, բայց նաև որոշչի իմաստ են ձևոր բերում, որովհետև նրանց արմատը ածական է:

* 4

Եթե Դիոնիսիոսի քերականության Թարգմանությունը ներկայացնում է հայերենի քերականության առաջին սխեմատիկ շարադրանքը, ապա նրա տերմինաբանությունը հանդիսանում է հիմքը ոչ միայն «հունարան դպրոցի», այլև հետագայում՝ մինչև օրս հայ բոլոր քերականությունների տերմինաբանության: Այս տեսակետից կարևոր ու հետաքրքիր է անդրադառնալ «հունարան դպրոցի» կերտած քերականական տերմինների պատմական նշանակությանը:

«Հունարան դպրոցի» ստեղծած հայերենի քերականական տերմինները հետադայում անցել են պատմական զարգացման երկարատև ուղի: Վ — X դդ. հայ մեկնիչները՝ Դավիթ Փլլիսոփան, Անանուն, Մովսես Քերդոզը, Ստեփանոս Սյունեցին, Համամ Արևելցին ցուցաբերել են զգալի

ինքնուրույնություն և ձեռք են բերել մի շարք կարևոր նվաճումներ. առաջին տեղում այդ մեկնիչներն են մանրամասնորեն քննության առել հայերենի հնչյունաբանական, ձևաբանական շատ հատկանիշներ և տվել նրանց ձևակերպումը: Նրանք հետաքրքիր տեղեկություններ են հաղորդել իրենց ժամանակի բերականական գիտելիքների մակարդակի, բերականական հասկացությունների բմբոնման եղանակի, և ամենակարևորը՝ տվյալ ժամանակաշրջանի հայերենի լեզվական լազմաթիվ իրողությունների մասին:

Այնուամենայնիվ այս շրջանի մեկնիչների մոտ բերականական նոր տերմինները որակ չեն կազմում, իսկ եղածներն էլ թրակացու բերականության հայ թարգմանչի ստեղծած տերմինները, լազատությունը, մեկնությունը կամ հոմանիշներն են հանդիսանում: Այս շրջանի վերջի համար բնորոշ են բերականության նկատմամբ հետաքրքրության թուլացումն ու անկումը և բերականական տերմինների կրոնական-ալարանական մեկնությունները:

XI—XV (հատկապես XII—XIII) դարերում նորից աճում է հետաքրքրությունը բերականության նկատմամբ: Դրություն արվեստի զարգացման հետ գործնական մեծ նշանակություն է ձեռք բերում բերականության զարգացումը: Այս շրջանի բերականություններում աստիճանաբար փոխվում է ուսումնասիրության մեկնողական բնույթը: Քիչ-քիչ հանդես են գալիս համեմատաբար ավելի գործնական բնույթ կրող բերականական աշխատություններ, որոնք հետապնդում են ուսուցումը դուրացնելու նպատակ: Փորձ է արվում դրել ոչ մեկնողական բնույթի բերականական աշխատություն: Սակայն «հունարան զարոցի» ստեղծած բերականական տերմիններն այս շրջանում էլ աչքի բնկնող փոփոխությունների չեն ենթարկվում:

Ուշագրավ է, որ XII դարում, «Արուեստ գրչութեան» երկի նեղինակ Արիստակեսը զարգական և գրչության արվեստի պահանջներից ելնելով կազմել է մի բառարան, որտեղ նա բացատրել է Դիոնիսիոսի բերականության հայերեն թարգմանության մեջ հանդիպող հունարան կազմությամբ անհասկանալի տերմինները, բառերն ու արտահայտությունները: Այս փաստը վկայում է այն մասին, որ XII դարում թրակացու բերականության հայերեն թարգմանությունը զարգում և գրիչների պասրաստության համար դեռևս շարունակում էր գործածվել իրեն բերականության դասագիրք, սակայն նրա լեզուն և մի շարք տերմիններ հասկանալու համար բառարանի կարիք էր զգացվում:

Այս շրջանի բերականական աշխատություններից առավել արժեքավոր են վարդան Արենիցու, Հովհաննես Երզնկացու, Եսայի Նշեցու և Առաքել Սյունեցու մեկնությունները, որոնց մեջ նկատելի է հունարան կազմությամբ բերականական տերմինները ավելի մատչելի ու հասկանալի դարձնելու ջգտում. սակայն այս մեկնիչների կազմած նոր տերմինները ևս մեծ մասամբ ծառայել են թարգմանչի կերտածներին որպես բացատրություն կամ հոմանիշ:

Հետագայում բերականական մտքի զարգացման հետ գրաբարի, այնուհետև՝ աշխարհաբարի ոչ մեկնողական բնույթի, ինքնուրույն բերականությունների մեջ «հունարան զարոցը» ստեղծած բազմաթիվ բերականական հասկացությունների իմաստներ նետահետև ձշտվել, հզկվել ու բյուրեղացել են:

Այսօր «հունարան զարոցի» ստեղծած բերականական տերմիններն իրենց նետագա պատմական ճակատագրի տեսակետից խմբավորվում են հետևյալ կերպ.

1. Տերմիններ, որոնք պահպանվել են մինչև մեր օրերը.—

ա) Ընդհանուր տերմիններ.— բերականություն, ստուգաբանություն.

բ) հնչյունաբանական տերմիններ.— տառ, գիր, ձայնաւոր, բաղաձայն, երկրաբառ, սուղ, նայ, հագագ, վանգ:

գ) Ձևաբանական տերմիններ.— մասն բանի (այժմ գործածական է «խոսքի մաս» ձևը), անուն (այժմ գործածվում է տարբերակված ձևով՝ «գոյական անուն», «ածական անուն», «թվական անուն»), հասարակաբար, յատկապէս (այժմ՝ «հասարակ անուն», «հատուկ անուն» ձևով), սեռ, արական, իգական, չեղոք, թիւ, եղական, երկական, յոգնական (վերջին երեք տերմիններն այժմ գործածվում են՝ «եղակի», «երկակի», «հոգնակի» ձևով), նյութ, ուղղական, սեռական, տրական, հայցական, կոչական, թուական, դասական, արցական, բայ, ներգործություն, կիր, ներգործական, կրատրական, խոնարհում, սահմանական, իրամայական, բղձական, ստորագասական, դէմք, ամանակ (այժմ՝ «ամանակ» ձևով), ներկայ, անցեալ, ապառնի, լծորդություն, լծորդ, անորոշ, յաւղ, նախադասական, ստորադասական (այժմ՝ «նախադաս», «ստորադաս» կամ «ետադաս» ձևով), դերանուն, ստացական, մակրայ, ամանակի (այժմ՝ «ժամանակի») մակրայ, չաղկապ, թարմատար:

դ) Բառակազմական տերմիններ. — պարզ, բարդ, բարդություն, ածանց, ածանցական (այժմ՝ «ածանցավոր» ձևով), փաղաքշական, բայածական, բաղդատական (այժմ՝ ավելի շատ՝ «համեմատական» ձևով), գերադրական:

ե) Բառագիտական տերմիններ. — բառ, հոմանուն:

զ) Կետագրական-առոգանական տերմիններ. — կէտ, ստորակէտ, միջակ (այժմ՝ «միջակէտ» ձևով), տրոհություն, առոգանություն, շեշտ, բույժ, պարոյկ, երկար, ապաթարց, ենթամայն (այժմ՝ «ենթամայն» ձևով):

2. Տերմիններ, որոնք պահպանվել են, բայց իմաստային որոշ փոփոխություն են կրել. —

ա) Հնչյունաբանական տերմիններ. — ձայնորդ — նշանակել է ընդհանրապես «բաղաձայն»։ այժմ՝ ձայնավորների ու բաղաձայնների միջին տեղը զբաղող սոնանտ հնչյուն: Կիսաձայն — նշանակել է շփական, այժմ՝ կիսաձայն է համարվում յ ձայնորդը:

բ) Ձևաբանական տերմիններ. — լուսական — նշանակել է քանակական թվականները, այժմ՝ բառիմաստի ընդլայնմամբ նշանակում է ընդհանրապես թվական անուն: Դասական թվական և 2. ժամանակի ու ձևի մակրայններ, այժմ՝ միայն դասական թվական: Հարցական — 1. հարցական դերանունները և 2. հարցում պարունակող տեղի, ժամանակի ու ձևի մակրայններ, այժմ այս տերմինը գործածվում է՝ 1. հարցական դերանունները, 2. հարցական եղանակավորող բառերը և 3. հարցական նախադասությունները նշելու համար: Անորդ, անորդ — հարցականներից կազմված հարաբերական դերանունները, այժմ տերմինը պահպանվել է անորդ ձևով ու գործածվում է՝ 1. անորդ դերանունները և 2. անորդ դերբայը նշելու համար: Ցուցական — ածականանիշ և թվականանիշ ցուցական դերանունները, այժմ՝ 1. ցուցական դերանունները և 2. ցուցական եղանակավորող բառերը, խոնարհում — 1. բայի եղանակները (նկատի ունենալով, որ յուրաքանչյուր եղանակ ունի իր խոնարհումը) և 2. խոնարհման տեսակները՝ լծորդությունները, այժմ գործածվում է միայն վերջին իմաստով: Խախտություն — կապ՝ նախդիր, նախադրություն, նախածանց, այժմ իմաստի նեղացմամբ գործածվում է միայն երկրորդ իմաստով: Ստորադաս (f) — ետադաս և ետադրություն, այժմ՝ միայն ետադաս: Դեական, բաղդատական — մակրայնների տեսակներ, այժմ՝ որակական ածականների համեմատության աստիճաններ: Քանակություն — չափի և աստիճանի մակրայն, այժմ՝ «որակական» ձևով նշանակում է թվականի մի տեսակը: Առոգանական տերմիններից պահպանվել է ամանակը՝ որպես տաղաչափական տերմին: 3. Տերմիններ, որոնք իմաստը պահպանվել է, բայց անվանումը և կետագրությունը փոխարինվել են: Ընդունվել է.

ա) Հնչյունաբանական տերմիններ. — երկձայն — այժմ՝ երկհնչյուն, նուրբ — խուլ, միջակ — շայնեղ, թալ — շեշեղ պայթական:

բ) Ձևաբանական տերմիններ. — առաքական — գործիական, իսկ — հատուկ (անուն), մակադրական — ածական, մակրաշխ — որոշյալ գերանուն, հաստատադրություն, տրամադրություն — սեռ (բայական), միջին (սեռ) — հասարակ (ընդհանուր) բայեր, ընդունելություն — դերբայ, աներևոյթ — անորդ դերբայ, յարաձգական, յարաձիգ — անցյալ անկատար, յարակայ, յարակայական — հարակատար, որը կազմված է «վաղակատար»-ի նմանությամբ, գերակատար, առաւելակատարական — վաղակատար, միջակութեան, քերգութեան — ձևի (մակրայններ), թուոյ յայտական — աստիճանի (մակրայններ), ետղական — տեղի (մակրայններ) և այլն:

գ) Կետագրական տերմիններ. — կէտ աւարտեալ — վերջակետ:

դ) Բառագիտական տերմիններ. — փաղանուն — հոմանիշ, համանիշ, բակձաձական — հավաքական անուն, քերդեալ — բնածայն:

4. Տերմիններ, որոնք այժմ գործածությունից դուրս են եկել. —

ա) Ընդհանուր տերմիններ. — վերծանություն, զրուցատրություն, առձեռն բացատրություն, համեմատության տեղեկություն, դատումն քերգածաց:

բ) Հնչյունաբանական տերմիններ. — երկամանակ, բոնարարբառ, շարաձայն, բարբառակից, բարակ, լերկ, ստուար, խաժ, յոյր, անձայն, կրկնակ, վախճանական, բազմաւորական, աղատ, փաղառություն, պարառություն, շաղաշար:

գ) Ձևաբանական տերմիններ. — անուանական, հայրենի, պատուիրական, խնդրական, փաստական, վերբերական, նմանական, դերհատուցական, ներխոնարհություն, խոնարհություն, ապերդմնական, խոներդմնական, մատարկայի կամ ճշգրտութեան, մատհրամանոյ, բղձից նշանական, աւաղական, հրաշական և այլն:

դ) Բառակազմական տերմիններ. — հայրանունական, յարանուն, յարարարդ:

ե) Բառագիտական տերմիններ. — առինչունակ, իրրառինչունակ, բերանուն, ազգական, յատուկան, պարունակ:

դ) Կետադրական-առոգանական տերմիններ. — ոլորակ, թափ, սոսկ, կիրք, ստորատ, շեշտու-
լոր, յարաշեշտ, նախադարձեշտ, յարապարոյկ և այլն:

Այսպիսով, «Հունարան դպրոցի» ստեղծած հայերենի քերականական տերմինների կարգա-
վորումն ու պատմական դարդադրումը ընթացել է հետևյալ ուղղությամբ.

1. Քերականական բաղաձայնի տերմիններ դարձրել շարունակ անփոփոխ կերպով պահպանել
ին իրենց գոյությունը և այժմ էլ օգտագործվում են հայերենի քերականության մեջ:

2. Քերականության, որպես ինքնուրույն գիտության առանձնացումը բանասիրությունից
առիթ է հանդիսացել, որպեսզի բանասիրական քերականությանը հատուկ գրականագիտական.
տաղաչափական տերմինները քերականագիտական տերմինաբանությունից դուրս մղվեն:

3. Հնչյունաբանական, ձևաբանական, առոգանական մի շարք հասկացությունների անվա-
նումներ, որոնք հատուկ էին հունարենին և վերջինիս հետևողությամբ էին անցել հայերենին,
որոշ ժամանակ գործածվելուց հետո դուրս են մղվել հայերենի քերականությունից:

4. Բաղաձայնային տերմինների համար մեծ մասամբ կայունացել ու պահպանվել է միայն
մեկ իմաստ (թեև այսօր էլ դեռևս շարունակվում է քերականական մի քանի տերմինների բաղ-
աձայնացումը), իսկ հոմանիշներից հաղթող է հանդիսացել առավել հաջողը կամ մեկը, որը
գործածությունից հանել է մյուսներին:

5. Մի շարք տերմիններ թեև պահպանվել են, բայց քերականական հասկացությունների հե-
տագա ճշտման հետևանքով փոխել են իրենց իմաստը, իսկ ուրիշ տերմիններ իրենց անհաջող
կազմության կամ անհասկանալիության պատճառով փոխարինվել են նորերով:

Տերմինների վերահիշյալ խմբավորումը ցույց է տալիս, որ «Հունարան դպրոցի» ստեղծած
ավելի քան երկու հարյուր քերականական տերմիններից անփոփոխ կերպով պահպանվել են
շուրջ ութսունը: Մոտավորապես քսան տերմին էլ պահպանվել են իմաստային որոշ փոփոխու-
թյամբ: Այս երկու խմբերի տերմինների գումարը հավասար է «Հունարան դպրոցի» ստեղծած
քերականական բոլոր տերմինների ընդհանուր գումարի համարյա կեսին: Այս փաստը փայլուն
կերպով ցույց է տալիս, որ դեռևս V դարում «Հունարան դպրոցի» բեղուն մշակներն ստեղծել են
հաջող քերականական տերմիններ: Եթե նկատի ունենանք, որ գործածությունից հանված տերմին-
ների որոշ մասը ևս երկար ժամանակ գործածական է եղել գրաբարի քերականների կողմից, իսկ
առհասարակ բոլոր տերմինները իրենց ժամանակին ու հետագայում առավել կամ նվազ չափով
համընդհանուր ճանաչում են գտել, ապա դժվար չի լինի եզրակացնել, որ «Հունարան դպրոցի»
ներկայացուցիչները հանդիսանում են հայերենի քերականական տերմինաբանության ստեղծող-
ները: